



ՀԱՍԱՐԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐԼՈՒՅԱԿԱՆ ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

### «Դեմոկրատների» վախը դեմոկրատիայից ե...

Արցախի Հանրապետության նախագահի ընտրությունը բնութագրում է, նույնիսկ իրարանցման մասնաց արտաքին այն ուժերին, որոնք այսօր կամ այնօր, անմիջականորեն թե այլապես առնչված են հայ-ադրբեջանական հակամարտությանը, ավելի կոնկրետ՝ արցախահայության կացությանը եւ հետագա ճակատագրին: Այդ ընտրությունը, առանց չափազանցության, խառնեց ժողովրդի խաղաղաբոլորը ու երեւակեց ոմանց՝ մինչ այդ փոխարկված կեցվածքներն ու մոտեցումները, չասելու համար՝ շահերը:

Արդեցուցիչ է իսկապես: Փոքրիկ, շատ փոքրիկ մնացած մի երկիր, դաշտաված թեմանի գերագանց ուժերով, մի փոքրիկ հավաքականություն, ընդամենը 120 հազար՝ սովահարության եւ անսուզության մասնված ժողովուրդ, իր սահմանադրությանը հավասարիմ՝ իր խորհրդարանի դասգամավորների փլեարկությամբ ընտրում է իր ղեկավարին՝ նախագահին, եւ փոխանակ ծափահարության արժանանում դրսի խժալուր աղմուկին ու դարսավանդին, ընդամենը մեկ բացառությամբ՝ Հարավային Օսեթիայի ինքնահռչակ ղեկավարության: Այնուհետև աղմուկ ու դարսավանդ, որին ներկա դարում հանդիպել ենք միայն զինվորական հեղաշրջումների դարագայում, աշխարհի սարքեր երկրներում տեղի ունեցած: Նույնիսկ այնուհետ երկրներ, որոնք կարող էին լուռ մնալ եւ կամ ի գիտություն ընդունել կասարվածը, անկողջ հյուրի մամ դարս համարեցին հայտարարել, թե իրենք չեն շնորհավորելու Արցախի նախագահի ընտրությունը:

Նմանների շարունակ եր մաեւ, զոնե ինձ համար անսղասելի Եվրոմիության ղեկավարությունը, որը սովոր է բոլորին ու բոլորիս ժողովրդավարության դասեր սալ ու սովորեցնել, թե ինչ գույն ու համ ունի դեմոկրատիան, ինչպես է ղեկավարելու ու ժողովուրդները ղեկավարվեն, ինչ է նշանակում մարդու իրավունք, ժողովուրդների ինքնորոշման եւ ինքնաղեկավարման սկզբունք, եւայլն, եւայլն:

Այնուհայտն՝ ցուցադրական այդ բոլոր կեցվածքները ուղղված էին ոչ այնքան մեզ, որքան՝ ի ցույց եւ ի լուր իլիան Ալիեւի բռնասիրական ռեժիմին, որն այսօր սիրելին է դարձել Արեւմուտքի հակառուսական բլոկի, որը, իբր ծածուկ, ռուսական զագ է ստանում Ադրբեջանի «փաթեթավորմամբ» եւ ուկրաինական հացահատիկ՝ թուրք-ռուսական միջնորդությամբ, սակայն չի հանդուրժում, որ այդ եւ մամ բիզնեսների արանում ձգվող մի փոքրիկ երկիր ու ժողովուրդ օգտվի ինքնավարության իր իրավունքից ու դուրս գա հակառակորդների ցեղասպանական աղանցից:

Այդ հակառակորդների մեջ է մաեւ Հայաստանը, ոչ ժողովուրդը անուշեւ, այլ՝ բոլոր լծակները ձեռքին տալիս եւ ինքն էլ այլոց ձեռքին լծակ դարձած իշխանավորը՝ վարչապետի զգեստով: Դեռ մի ֆանի օր առաջ, սեպտեմբերի 11-ին, Պետրոս Դազարյանին սված հարցազրույցում, ավստսանք հայտնելով ԱՀ այժմ արդեն նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականի համար, նա ղիդասոսաբար արդարացում էր նորընտիր նախագահ Սամվել Զահրամանյանին իր չնորհավորելը, իբր խղճալով, որ նա շատ ծանր դասախանասվություն է վերցրել իր վրա: Անցեսելով փաստը, որ նորընտիր նախագահը երեկվա խոխեն չէ եւ անուշեւ իրենից լավ գիտի սիրող դժմ կացությունը ու, հետեւաբար, հենց նրան է ղեկավարելու եւ հաջողություն ու կորով մաղթել հաղթահարելու դաժան մարսահրավերները, մաեւ աջակցություն խոստանալ, ՀՀ գլխավոր իշխանավորը փոխարենը խրատ է սալիս թե նորընտիր նախագահին, թե մնացած արցախցիներին, թե մեզ՝ բոլորիս: «Լեռնային Ղարաբաղում հաստատված հունամիսար ձգնաժամը չհաղափանացնելու» խրատ: Կարծես այդ ձգնաժամը, այսինքն երջափակումը, ստեղծվել է հենց այնպես, հավեսի կամ, ասեմք, արցախահայության դիմացկունությունը փորձելու, օրինակ՝ Գինեսի զբում սովին անեմատերկարը դիմանալու ռեկորդ սահմանելու համար:

Մինչդեռ բոլորից լավ ինքն գիտի, որ հունամիսար ձգնաժամը ֆաղափական, գերֆաղափական դրդադասձառներ ունի, եւ հենց ինքն է ֆանիցս բարձրաձայնել ցեղասպանության վսանգի մասին: Իսկ ցեղասպանությունները, որդես կանոն, աղափաղափական չեն լինում, երբեք:

Արցախի ղեկավարությանը խրատ սալու փոխարեն Նիկոլ Փաշինյանը լավ կաներ, եթե, իբրեւ «ժողովրդավարության բասիոնի» գերագույն գլխավոր հրամանատար հայտնեւ մեր ժողովրդին, թե նույն՝ սեպտեմբերի 11-ին կայացած հեռախոսագրույցի ընթացում իրեն ինչ խրատ է սվել թուրքիայի նախագահ Էրդողանը: Ըստ թուրքական մամուլի, թուրքիայի նախագահը դարագաղես թագիր (թուրքերեն՝ հանդիմանություն) է սվել Փաշինյանին՝ նրանից բացատրություն տալիս Սեփանակերտում տեղի ունեցող իրադարձություններին մասին: Ահա՛ թե ինչու Փաշինյանը «խղճահարությամբ» է բացատրում իր լռությունը նորընտիր նախագահին շնորհավորելու հարցում, մաեւ՝ ֆաղափական կոնյուկտուրայի դարսաղաբանով, որեղ բոլոր արտաքին ուժերը, ներառյալ Ռուսաստանի նախագահը, Արցախը Ադրբեջանին հանձնելու իրենց դավադիր գործողությունները չնեղացնում են «Հայաստանը ձանաչել է Ադրբեջանի ինքնիշխանությունը Ղարաբաղի նկատմամբ» նախադասությամբ: Նույնը կրկնում են բոլոր երկրները՝ «դեմոկրատ», ավստրիսար թե բռնաղեկական: Բոլորին դուր է եկել այդ բանաձեւը, որեղ մեր կարծիքով կա ընդամենը մեկ սխալ բառ՝ «Հայաստան»:

Հայաստանը չի ձանաչել մամ բան եւ չի ձանաչի երբեք: ՎԱՐՈՒՍ ԱՎԵՏԻՔՅԱՆ

### Հանուն Արցախի. Համաեվրոպական հանրահավաք Բրյուսելում

Հոկտեմբերի 1-ին, ժամը 14-ին, Բրյուսելի Շուման հրադարակում համաեվրոպական հանրահավաք է գումարվելու՝ հանուն Արցախի փրկության: Հանրահավաքի կազմակերպիչն է «Եվրոպացիները հանուն Արցախի» (Europeans for Artsakh) 17 երկրի 500 կազմակերպություն միավորող շարժումը, որը մամլո հաղորդագրության մեջ իրագրել է, թե հոկտեմբերի 5-ին Բրյուսելում կայանալիք եվրոպական ֆաղափական համայնքի երրորդ համաժողովի Փաշինյան-Միտել-Ալիեւ-Մակրոն-Շոլց հանդիմանն ընդառաջ եվրոպահայությունն ու Արցախի բարեկամները նոդասակ ունեն լսելի դարձնելու իրենց ձայնն ի նոդաս արցախահայության իր բնորանում խաղաղ աղբելու, դարդարեցնելու Ադրբեջանի ցեղասպան ֆաղափականությունը: «Նաեւ մեզնից է կախված Արցախի աղագան», գրված է մամլո հաղորդագրության մեջ: ԱՆՎԵՏԻՔՅԱՆ




### Անօգտակար շասախոսություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱԶՍԻՐՅԱՆ

Չնայած մեծ շասախոսությանը, չնայած վարչաղես Փաշինյանի, ինչու չէ՛՝ նաեւ իշխանական եւ ընդդիմադիր գործիչների հնչեցրած խոսքի, հարցազրույցների, տեսակետների առասությանը, չնայած

րեն այս առթիվ հավանաբար ռուսների եւ ադրբեջանցիների միջեւ ինչ-որ դայանաեվրոպաձություն է խախտվել, եւ ոչինչ չարժեն ՌԴ ԱԳՆ հավաստացումները, թե Լաչինի միջանցքը կբացվի, կամ ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պետկովի ղնդումը, թե շարունակում են աշխատել այդ ուղղությամբ: Իսկ ՌԴ ԱԳՆ ներկայա-



Արցախում նոր նախագահի եւ վարչաղեսի առկայությանը՝ Արցախում հունամիսար աղեսի հարցում փոփոխություն չկա, օր-օրի անեն ինչ ավելի վասթար է դառնում: Հունամիսար բեռով ռուսական մեկ բեռնատարի մուտքն Ադրբեջանի ձանաղաղով եւ ռուսական լավատեսությունն այդ առթիվ, թե հայելային կբացվի նաեւ Լաչինի ձանաղաղը, իրականում փուչիկ էր, Ադրբեջանը փակ է ղաղում այն: Փաստ-

ցուցի, ՌԴ ԱԳ նախարարի, ՌԴ նախագահի նյարդային հայտարարությունները Արցախի եւ Հայաստանի թեմաներով, փաստորեն, նաեւ արգասիք են ռուսական խաղաղաղաղաների գործողությունների անարդյունավետության, Հայաստանի վարչաղեսի՝ արեւմտյան ուղղությամբ ձախ գնալու խոսքին ու գործողություններին արձագանք լինելուց գաս: ⇒ 7

### Ռոշ Հա Շանան կօգնի՝ հրեա 50 ռաբբիներին վերաղառնալ Աստծո մոտ

ՄԱՆՐԻՏ ՀՈՎՍԵԹՅԱՆ

Այսօր՝ ուրբաթ երեկոյան Ռոշ Հա Շանայով (նաեւ Ռոշ Խա Շանա, որ նշանակում է սարվա գլուխ) սկսվում են հրեական գլխավոր տոները, որ տեւում են մինչեւ կիրակի՝ սեպտեմբերի 17-ի արեւամուտ: Ռոշ Հա Շանան նշում է Աղամի եւ Եվայի արարման տարեթիվը, հազվում 5784-ը, սրա տուրջ իհարկե վեճն Իսրայելում եւ հրեական աշխարհում շարունակվում է, ֆանի որ հրեաների մի մասի ղնդմամբ՝ Ռոշ Հա Շանան նշում է աշխարհի արարման տարեթիվը:

Այդ օրերին հրեա հավասացյալն ինքնիրեն եւ Արաչին հոգեւոր հաշվետվություն է սալիս՝ անցնող տարվա բոլոր արարների, խոսքերի եւ մտքերի համար: Նա որոշում է կայացնում, թե ինչպես ուղղել թերությունները եւ զանցանքները, ինչպես վերաղառնալ Աստծո մոտ:

Հրեական ավանդույթի համաձայն, այդ օրերին շատ են աղոթում, հավասում, որ դրանով աղղում են Արաչի որոշման վրա: Տոնի երկրորդությունում գերակշռում են ինքնամանաղասական եւ զղջման աղոթները: Սրա վերաբերյալ հրեական մամուլում աչի է զարնում երգիծանկարների առասությունը:

Միգուցե հենց այսօր Եվրոպայի ռաբբիների կենտրոնի կայում հրադարակված բաց մամակը ստորագրած եվրոպական 20 երկրների 50 ռաբբիները զղջան, որ սեպտեմբերի 6-ին մամակ են հղել ՀՀ վարչաղես Նիկոլ Փաշինյանին եւ նախագահ Վահագն Խաչատուրյանին՝ դասաղատելով եւ «իրագրելով» Հայաստանի դաշտնայաներին, թե վերջիններս իրավունք չունեն գործածելու «ցեղասպանություն» բառեզրը, երբ խոսքն Ադրբեջանի՝ 2022 թվականի ղեկեմբերից Բերձորի միջանցքի երջափակումը նկարագրելու մասին է, ինչը 120 հազար արցախցիների սովահարության դասձառ է դարձել: ⇒ 2

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Բանը

Հիմա, եթե ես ըսեմ որ չսիրեցի սա սեմոֆրասի ըսուածը, սխալ ըրած կըլլամ: Տեմոֆրասին կարգ մը առաւելութիւններ ունի, որոնց ամենացայտունը խօսքի ազատութիւնն է: Ես ալ ճիշդ այդ ազատութեան վրայ մասսոյի կոխեմ ու միւս մասս վեր բարձրացնելով միտքի յայտարարեմ՝ «Կը հրաժարիմ խօսքի ազատութենէն ու անոր հետեւանմանէն...»:

Խօսքը «Բան»ն է, որ ըստ Աստուածաշունչին «Ի սկզբանէ էր Բանը եւ Բանն էր Ասուած»... Այսինքն «բան»ն է, կամ խօսքը՝ հրաժարիլը Ասուածէ հրաժարիլը կը նշանակէ: Ուշադիր, ես խօսքէն չեմ հրաժարի, ես խօսքի ազատութենէն կամ ազատ խօսքէն կը հրաժարիմ: «Հրաժարիմք ի սասանայէ» կը ըսենք, բայց «հրաժարիմք Արարիչէն» չենք ըսեր, թէ ուր ըսողներ կան, ան ալ այստեղ, Հայաստանի մէջ: Սովետական սիրակալութենէն ժառանգուած ահագին աթէիսներ կան, ան ալ բարձր ուղիներուն մէջ, վկայ՝ չարօթող, չխաչակնող ղեկավարները, վկայ՝ հեթանոսական կրօնին վերադարձող արեւորդիները, վկայ՝ սասանայադաւանները եւ այլն:

Թէեւ «Բան»-ի մեկնաբանութիւնները շատ են ըստ աստուածաբանութեան, սակայն կրօնական բախումներն են չմտած, սահմաններ, թէ ինչ բանի մասին միտքի խօսքիմ:

Խօսքի մարդկային սովորական խօսքի եւ անոր ազատութեան մասին: Ազատ խօսքը որքան որ ցանկալի է, նոյնքան ալ անտէր է, ըստ դարձաբանութեան եւ ըստ ընկալողին: Խօսքի ազատութիւն կը տրուի խօսքի սահմաններ ճանչցողին: Հիմա միտք ըսէք, թէ այդ ինչ սեռական ազատութիւն է, որ սահմաններ ունի: Այո՛, աշխարհի վրայ ամէն ինչ սահման ունի, անսահման բան չկայ: Ձեր մտքէն ինչեր որ անցընէք, միտքովն է. երբ խորքը թափանցէ, միտքի տեսքէ որ սահման ու սահմաններ կան: Սէ՛ր, հաւատարմութիւն, զոհողութիւն, ուրախութիւն, զուարճամբ, բարութիւն, չարութիւն, ոճի՛ր, որկրանդութիւն, առողջութիւն, հիւանդութիւն, գողութիւն, դաւաճանութիւն, աթոռանդութիւն, դատարարութիւն, խաղաղութիւն... Աւելի չեմ կարեն, ամէն ինչ սահման ունի: Եթէ յանկարծ այդ սահմանները բացուին, ոճանկոյս ըլլան ու վերացուին... անիշխանութիւնը գլուխը կ'առնէ, կ'երթայ: Օրէնք-մօտեմ չի մնար, ահաւոր իրարանցում մը կը տեսնուի, ուր «ունը տրոջը չի ճանչնար», ինչպէս կը ըսեն:

Այո՛, այնքան գովերգուած խօսքի ազատութիւնը իր ժխտական կողմերն ալ ունի, յատկապէս շարժումն հասարակութեան մօտ, որ մեծամասնութիւնը կը կազմէ մարդկութեան եւ իր ազդեցութիւնը ունի ընդհանուրին վրայ: Տուեալ միտքին մասին ասկէ առաջ ալ անդրադարձած են մէկ կամ երկու անգամ, սակայն միտք ալ ըսելիք կայ այս անընդունելի երեւոյթին մասին, որուն արեւները վերջ չունին եւ երբեմն հակակրօնական կողմնակից մտքով ալ կը դատարարեն, մասնաւորաբար երբ յանուն ազատութեան ի՞նչ ահաւոր լեզու մը կ'օգտագործուի, ի՞նչ անընդունելի ու նողկալի բառադաւաններով, ի՞նչ սանձարձակ ամբաստանութիւններ կը ըսեն, ի՞նչ վարկաբեկիչ, հայիտայից որակներն ու անեծքներ:

Բոլոր այն երկիրները, որոնք կը դարձնեն սեմոֆրասիի դրօշակակիրները ըլլալուն համար, յատկապէս ԱՄՆ, որ նոյնիսկ ներխուժումներով ու ռազմական միջոցներով սեմոֆրասի կ'ուզէ սփռել, այդ երկիրներուն մէջ նոյնիսկ անհասներու կողմէ ղեկավարութիւնը խայտառակելը, ծաղր ու ծանակի ենթակելը, փառքեան նոխազ դարձնելը սովորական երեւոյթներ են եւ ենթական անդաժի՛ք կը մնայ յանուն խօսքի ազատութեան:

Ըսենք, որ հասարակութիւնը չի սանձեր իր լեզուն եւ հրապարակաւ ըսելիք կը ըսէ, ինչպէս բախում մէջ իր դրացիին հետ բախուելու ատեն, բայց երբ հարցը կը վերաբերի վերիններուն, որոնք ի դատարար լեզու մը գործածելու փոխարէն դիմացինին կը դատաստանեն օգտագործելով սանձարձակ լեզու մը, նոյնիսկ երբ զինք «նեղի դնողը» յատուկ ռազմավարութեամբ մօտեցող ըլլայ եւ ուրախանայ, երբ տեսնէ իր խօսքին ազդեցութիւնը, երբ դատաստանանքն անձնի դատաստանել, սակայն երբ ան ալ նոյն գէնքով կը դատաստանէ եղած յարձակումին, այն ատեն արդէն փոխադրուած կը ըստ իր դիմացինին ըսուածը կը մերկանայ իր զստաբարձրիկէն, դիմացինին «յաղթանակ» շնորհելով:

Աղաջոյց՝ այս օրերուն Երեւանի փողոցներուն ու բակերուն մէջ, ինչպէս նաեւ դիմաճեմի տներուն ծաւալող մախրոնական արձաւան մասնակցողներու լեզուն...

Ուշադիր, խօսքը փանփուսի մէջ է, մէջ մը որ արձակուեցաւ, ալ ես չի դառնար: Խօսքը երկսայրի տուր է, գիտցի՛ր՝ ո՛ր կողմէն միտքի բռնեմ, որ դուն եղ չվիրաւորես:

Ռոջ Հա Շանան կօզնի՛ր հրեա 50 ռաբբիներին վերադառնալ Աստծո մոտ



➡ 1 Ադրբեջանն ամեն օր աշխատում է կեղծիք եւ սուտ տարածելով, իսկ ռաբբիները թերեւս լավ տեղեկացած չեն, որ իրենց ծայրահեղ ֆայլով վնասում են հենց իրենց դատարարները եւ ինքնութեանը: Չէ՛ որ վերջին ամիսներին իսրայելական մամուլն անընդհատ գրում է, թէ գոյաբանական վստահի դեմ հանդիման են, իսկ առաջիկա տարեկան օրերին զգուցանում հրեաներին աշխույժ լինել ահաբեկչական սղառնացող արհաւիրքից: Մասնավորապէս նշելով, թէ հրեաների դեմ մտան գործողութիւններ կարող են կատարել Ադրբեջանում, Վրաստանում, Թուրքիայում, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի երկրներում: Մեր երկրի անունը բարեբախտաբար չկա: Սակայն հարկ է անդրադառնալ, որ երբ մտան անարդար մամուլ եւ գրում, ավելացնում են ֆեյք չհամակրողների քիվը, Աստուծոց հեռանում են: Ռաբբիները այդ մամուլով փորձել են հավաստիացնել, թէ «ցեղասպանութիւն» եզրույթը դեմ է կիրառելի միայն հրեական Հոլոքոստը նկարագրելու համար: Այս մամուլի սակ իրենց ստորագրութիւնն են դրել նաեւ Պերմանիայի Տարբեր ֆաղաներում դատարարական վարող 6 ռաբբիներ՝ առիթ տալով Պերմանիայից կենտրոնական խորհրդի վրդովմունքին:

Կաթոլիկական «Ռոմաշիոն» սեղանների 13-ին անդրադարձել է թեմային, մեջբերելով ՊԿԽ ասեմադե 30նաթան Շոանգեներգի հետեւյալ մեկնաբանութիւնը. «ԼՂ-ին ցեղասպանութիւն է սղառնում, մեզ իրենց համեմատութիւնը հայտնելու փոխարէն Ադրբեջանի դիկտատուրան են դատարարում»: Պերմանիայից կենտրոնական խորհուրդը դատարարական հայց է ներկայացրել 6 ռաբբիների դեմ: Պերմանիայի համայնքում բոլորը չէ, որ ողջունում են Պերմանիայից կենտրոնական խորհրդի ժայթարի սույն տարբերակը: Ըստ Պերմանիայում հրեաների կենտրոնական խորհրդի սլայդների, ռաբբիների քիվը երկուսում 71 է: 6-ին շեղել են երեւոյթները տեսնելու եւ գնահատելու ճիշտ ճանապարհից, նրանց միտք նախ բացատրել, որ սխալվել են եւ հրաճնել 2015-16-ին Երջանաւոր մամուլային մի դատարարութիւն: ՊԴՀ կառավարութեան որոշ անդամներ, մասնավորապէս արտգործնախարար Ֆրանկ Վալսթր Շոայնմայերը ժամանակին հենց այդպիսի «դատարարութեամբ», թէ Շոան հարաբերականացվում է, նվազեցվում դրա բացառիկութիւնն ու եզակիութիւնը, հորդորում էր ֆաղական գործիչներին «ցեղասպանութիւն» ասիճանակար-

գումից գերծ մնալ, երբ Բունդեսթագում Երջանաւորում էր Հայոց ցեղասպանութեան մասին բանաճելը: Այժմ էլ Պերմանիայի նախագահ դարձած Շոայնմայերը նույն կարծիքն է, թէ 2016-ին Հրեաների կենտրոնական խորհուրդը հրապարակեց, որ դեմ չէ Մեծ եղեռնի «ցեղասպանութիւն» որակմանը, եւ դա որեւէ կերպ չի նվազեցնում Շոան: Ռաբբիները երեւի ծանոթ չեն այդ հրապարակմանը, ուստի խելամիտ կլինի նրանց հետ գրուել, աշխատել: Հրեաների համար տնական այս օրերին տեղին է հիշեցնել եղեռնից իրենց տարբերակը՝ Ռոջ Հա Շանային Նոյը ջիւղեղից հետո դուրս եկալ տարանից: Բոլորը գիտեն, որ աշխարհի շատ վայրերում հայերն ու հրեաներն աղբիւ են կողմ-կողմի, մտան են ու տարբեր: Երբ մենք չենք խոսում, ուրիշն իր սուտն է ունում: Հիմ բարեկամ ժողովուրդները միտքի դատարարանք լինեն միմյանց հասկանալու բանալին՝ մենք դատարար մեր դատարարութիւնը, ֆանի դեռ լեզու կա մեր բերանում: Իսկ թէ միջնորդ են որոնում, հեռու չգնանք՝ Հայաստանում հրեական համայնքը լավագույն դատարարն է: Ուրեմն արտանց շնորհակալութեմ հենց նրանց Նոր տարին՝ Շանա թույլ:

ՌԵՍՊԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱՄԲՐՈՒՄ

755 Mount Auburn Street  
Watertown, MA 02472 USA  
12 Սեպտեմբեր 2023  
Տար Սամուէլ Շահրամանեան

Կային արդարացի իրաւունքները հետադարձելը: Չօրակցութիւն յայտնելով Ձեր գլխաւորութեամբ գործող Արցախի իշխանութեան եւ հերոսական արցախահայութեան՝ կը վստահեցնենք Ձեզի, Պարոն Նախագահ, որ Ռանկավար Ազատական աշխարհասփիւռ մամուլի մեր օրգանները, իրենց խմբագրականութեամբ, աշխատակիցներով եւ բազմազան ընթերցողներու լայն Երջանակներով շարունակական թափով յառաջ միտքի մղեն իրենց զօրակցական-ֆարոգչական աշխատանքները, ի խնդիր Արցախի դատարարութեան ամրապնդումին ու իր ֆաղի ժողովուրդին դատարարութեան եւ բարեյաջող գոյերթին: 3աջողութիւն մաղթելով Ձեր ազգանուէր դժուարին առաքելութեան՝ կը խնդրենք ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքն ու ամբողջական մեցուկի երաշխիքը: ՌԵՍՊԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱՄԲՐՈՒՄ

Ազգ Ազատ Արցախ  
ՉՕՐԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱՄԲՐՈՒՄ  
Mirror Spectator  
Semanario Armenio SARDARABAD ԵՐԵՎԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Մարտափո՞ր, թե՞ փոթորիկ մի բաժակ ջրում

Այն դեպքում, երբ սոցցանցերը լայնորեն տարածում էին Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավար **Ջյարիմ Վալիեվի**՝ հայ-ադրբեջանական սահմանին տիրող լարվածության ֆոնին Անկարա կասարած աշխատանքային այցելության ժամանակ **Աթաթուրքի** դամբարանում Թուրքիայի դաշնային նախարար **Յախյար Գյուլերի** հետ խորհրդակցական լուսանկարը, երբ ամենուրեք խոսվում էր մեր սահմաններին Ադրբեջանի զինված ուժերի ահռելի ֆանադորային գործի, զինստեյնիկայի ու ռազմամթերքի կուտակումներից, եւ երբ ՀՀ վարչապետն իր միջազգային գործընկերներին (բացառությամբ Ռուսաստանի) զգուշացնում էր նոր դաշնակցի վստահ մասին, Իրանի ԱԳՆ խոսնակ **Նասր Զանանին** իր հերթական մամուլի ասուլիսի ժամանակ, կրկնելով Արցախի ադրբեջանական դաշնակցության մասին Իրանի դաշնակցական դիրքորոշումը, խոսեց դաշնակցի չհրահրելու ադրբեջանական կողմի հավաստագրումների մասին: Զանանին նույնիսկ, վկայաբերելով իր ադրբեջանցի գործընկերների խոսքերն, ասաց՝ «սահմանային սեղանաբերն ընդամենը ձմռան ամիսների համար նախատեսված սովորական միջոցառումներ են»: Իսկ Բաքուում Իրանի դեսպան **Սեյթ Աբբաս Մուսալին** էլ հնարավոր դաշնակցի վստահ մասին բարձրագույն ազդեցությունը «մի բաժակ ջրի մեջ փոթորկի» հետ:

Դրանով հանդերձ, Իրանում գործող «Եվրասիա» վերլուծական կենտրոնի ավագ փորձագետ, միջազգային իրավունքի դոկտոր **Ահմադ Զազեմին** դաշնակցի վստահ իրատեսական է համարել եւ ԻԻՀ ԱԳՆ-ի հետ փոխկադրակցված irdiplomacy կայքում հրատարակել **«Սյունիքի հնարավոր դաշնակցումն ու Իրանի դաշնակցական առաջնությունը»** խորագրով իր ծավալուն հոդվածը:

Ահմադ Զազեմին իր հոդվածում մասնավորապես անդրադարձել է ադրբեջանական զորամիավորումների կուտակումներին ու հայկական Սյունիքի մարզում հայտնված ադրբեջանական բանակի հանդերձանով վարձկան ուժերին, որի դաշնակցում էլ Հայաստանում հնչում է արցախյան երրորդ դաշնակցի սազմադր:

Ըստ հոդվածագրի, Ադրբեջանի ագրեսիվ մտադրություններն ավելի սեսանելի են դառնում հասկալիս Բաքուի ու Թեյ Ավիլի միջուկ անցնող ամիսներին տեղի ունեցած խորհրդադաշնակցական ու բացահայտ բանակցություններից հետո: Իսրայելի կողմից Բաքուի նոր զինստեյնիկայի սրամարտը, նշված է հրատարակման մեջ, տեղի է ունենում Բաքու-Թեյ Ավիլի դաշնակցական վերաբերման շրջանակներում, համաձայն որի, Բաքուն Իսրայելին թույլ է տալիս Ադրբեջանի սարածում տեղակայել ավելի մեծ ֆանադորային զինստեյնիկա, ֆան անհրաժեշտ է Հայաստանի հետ դաշնակցի համար:

Հեղինակի համոզմամբ, կովկասյան իրադարձությունների արագ սեմոտերը, սարածաբազմազան սարքեր խաղաղոգների, այդ թվում՝ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի ֆայլերը, ինչպես նաեւ Կովկասում Ռուսաստանի սխալ հավակնությունների վրա հիմնված ֆաղափականությունն ու Իրանում խուճաղ առաջացնելու նպատակով «գործ գայլերի» ակտիվացումը, ավելի է բարդացնում խնդրի էությունը:

Կովկասում տիրող իրավիճակը նկարագրելու եւ Իրանի անելիքները հստակացնելու նպատակով, Ահմադ Զազեմին անհրաժեշտ է համարում հաճախ առնել ներքին գործընկերներին:



Ջյարիմ Վալիեվն ու Յախյար Գյուլերը

րագրելու եւ Իրանի անելիքները հստակացնելու նպատակով, Ահմադ Զազեմին անհրաժեշտ է համարում հաճախ առնել ներքին գործընկերներին:

**Ալիեյան** կլանն Ադրբեջանն ամբողջովին հանձնել է Իսրայելի տնտեսությանը՝ իր ճակատագիրը շարժելով՝ երեւակայական «Ջանգեզուրի», նույն իմիջացումը՝ ՆԱՏՕ-ի «թուրանական» միջանցքի հետ: Սակայն, հայտնի է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագրի հայտարարումը որեւէ իրավական հիմք չի նախատեսվել մասն միջանցքի համար: Բացի այդ, Իրանի սարածով Ադրբեջանի ու Նախիջեւանի միջուկ հաղորդակցության հնարավորությունը բացառում է մասն միջանցքի անհրաժեշտությունը: ՆԱՏՕ-ի «թուրանական» միջանցքը Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ ՆԱՏՕ-ի դավադրության մաս է կազմում, որը նպատակ ունի կասեցնելու Իրան, Ռուսաստան, Չինաստան առանցքով նոր աշխարհակարգի ձեւավորումը: Այդ դաշնակցում էլ նրանք աշխատում են, օգտվելով ուկրաինական դաշնակցի հետեւանով Կովկասում Ռուսաստանի դիրքերի հարաբերական թուլացումից, կյանքի կոչել անգլիացիների 200-ամյա թուրանական գաղափարը:

ՆԱՏՕ-ական միջանցքի գործարկման հարցում գլխավոր արգելիք Իրանի դիրքորոշումն է: Բաքուի, Թեյ Ավիլի ու Լոնդոնի հաճախակի այն է, որ ֆանդեր Իրանում ներադաշնակցական իրավիճակը ձգնաժամային որոշումներ կայացնելու ասիճանի չի սրվել, հնարավոր չէ ուժի գործադրմամբ լուծել միջանցքի հարցը: Եվ բնավ էլ դաշնակցական չէ, որ վերջին ամիսներին եւ նախորդ սարվա ընթացքում Բաքուն, Իսրայելի ու Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելով, ամենակարգի դերակատարությունն է ստանձնել Իրանի ներադաշնակցական կյանքը սրելու հարցում: Ամենավերջին սադրանքներից մեկը Ռուսիա լճի չորացման դաշնակցական Բաքուում իսրայելական կիբեր կենտրոնի ու ալիեյան կլանի համագործակցությամբ Իրանում դժգոհություններ հրահրելու փորձն էր: Անուշահ, Թեյ Ավիլն ու Բաքուն այդ հարցում ռազմավարական սխալ էին թույլ սվել, ֆանի որ 2021 թ. սեպտեմբերին «Խեյբարի նվաճողներ» նշանաբանով գործարժություններն ի ցույց դրեցին Իրանի կարողություններն ու հաստատվածությունը՝ սարածաբազմազան աշխարհադաշնակցական խաղաղական-

ները չեզոքացնելու ուղղությամբ:

Բաքուի ու Անկարայի լրբիստական կազմակերպությունները, որոնք հիմնականում հանդես են գալիս «գործ գայլերի» հանդերձանով, եւ շատ հաճախ երկրի որոշում կայացնող ասյաններում դաշնակցական դիրքեր են զբաղեցնում, հավասարաճ են, որ հաճախ առնելով 2020 թվականի արցախյան դաշնակցի փորձը, նոր դաշնակցի դեմ կլուծեն Սյունիքից միջանցք բացելու հարցը: Իրենց նպատակին հասնելու համար նրանք վերջին մեկ սարվա ընթացքում Իրանի ներադաշնակցական կյանքը ձգնաժամի վերածելու ուղղությամբ ջանքեր են գործադրում:

Հայ-ամերիկյան համաձայնագրի զորավարությունների անցկացումը, որի մասին երկրում ակտիվացած «գործ գայլերն» են բարձրաձայնում, ծանոթ սցենար է: Հայաստանը, 1994 թվականից ի վեր, Ադրբեջանի ու Վրաստանի մասն, մասնակցում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Այդ համագործակցությունը տեղի էր ունենում անգամ այն սարիներին, երբ Հայաստանը դեկավարվում էր ռուսամետ նախագահներ **Զոհարյանի** ու **Սարգսյանի** կողմից: Ուժագրավն այն է, որ աշխարհի ամենամեծ ԱՄՆ դեսպանությունը (բացառությամբ Իրաքի) Հայաստանում կառուցվել է հենց ռուսամետ Զոհարյանի նախագահության օրոք:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի իշխանությունները չեն թափաքել Ռուսաստանի ու ԱՄՆ-ի հետ համաժամանակյա համագործակցության մասին իրենց մտադրությունը: Երբեք է, Իրանը թե՛ նախկինում, եւ թե՛ այսօր դեմ է արտահայտվում Կովկասում, այդ թվում՝ Հայաստանում եւ Ադր-

բեջանում ԱՄՆ-ի ու արտահայտաբազմազան ուժերի ներկայությամբ, սակայն հայ-ամերիկյան համաձայնագրավարժությունների խնդրի վրա «գործ գայլերի» ընդգծված սեւեռումը ոչ թե դաշնակցական վերածված է Կովկասում ԱՄՆ-ի ներկայության մտադրությամբ, այլ բխում է այն մտադրությունից, որ Ալիեյի ռազմական ագրեսիային հակադարձելու հարցում Իրանի իշխանությունների մոտ կասկածներ առաջանան: Չնայած, որ նրանք Ադրբեջանի ու ԱՄՆ-ի միջուկ Կասպից ծովում անցկացված համաձայնագրավարժությունների նկատմամբ ոչ մի հակադրություն չեն ցուցաբերել: Այս երեսուցուց ֆաղափական հոսանքի ներկայացուցիչներն այն անձինք են, ովքեր ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների դաշնակցի խոսնակ **Նեյնսի Փելդսի** Հայաստան այցելելու օրերին ղեկավարում էին, թե այցի արդյունքներով Երեւանն իր համաձայնությունը կա Բաքուի ու Անկարայի դաշնակցած միջանցքի գործարկման հարցում, ուստի Իրանը չդեմ է հանդես գալիս Հայաստանի սարածային ամբողջականության դաշնակցության օգտին: Իրականում, Հայաստանն այդ ընթացքում հրաժարվեց Արցախից, սակայն միջանցքի հարցում զիջումների չգնաց:

Փաստորեն Ռուսաստանը Կովկասում եւ Թուրքիայի հետ հարաբերություններում թույլ սված մեկը մյուսին հաջորդող սխալների դաշնակցում, հայերի հիասթափության համար հող է նախադասարարել: Հայաստանի սարածի նկատմամբ 2022 թ. սեպտեմբերին Ադրբեջանի գործադրած ռազմական ագրեսիայի ժամանակ Ռուսաստանի կողմից ՀԱՊԿ-ի գործառնությունից հրաժարվելը, Լաչինի միջանցքի շրջափակումը կանխելու հարցում ռուս խաղաղադաշնակցի անգործությունը եւ Հայաստանի սարածային ամբողջականությունն ուղղված Բաքուի ռազմամետնից հայտարարությունների նկատմամբ Մոսկվայի կրավորական կեցվածքը, բավարար հիմք էին Հայաստանի արեւմտամետ վարչապետ **Փաշինյանին**՝ Ռուսաստանի հետ համագործակցությունից բացի, կենտրոնաձայն մաս ԱՄՆ-ի ու Եվրոպայի հետ անվստահային հարցերում համագործակցության վրա:

Այնուամենայնիվ, Ահմադ Զազեմին իր հրատարակման վերջում համոզմունք է հայտնում, որ Կովկասում Իրանի աշխարհադաշնակցական դիրքի առանձնահատկության ու կայունության հաստատման հարցում դաշնակցականներն Իրանին վերադաշնակցական առաջնությունն են տալիս, կարելի է բացառել «թուրանական միջանցքի» գործարկման հավանականությունը:

## Հայտարարություն

Օրերս համացանցով մի գրություն է հրատարակվել, որի բովանդակությունը ուղղված է ինձ, եղբորս՝ Փառեն արք. Ավետիսյանին եւ... Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի դեմ:

Գրությանը ծանոթացած ընկերներս, Հայաստանից թե՛ Սփյուռքից, խնդրելու դեմ դաշնակցական արձագանքներ եւ ընթերցանից դաշնակցական սալ ձեռով կասարելադրելու անգրագետ ու բովանդակությամբ անհեթեթ այդ գրությանը:

Չեմ կարող ընկերներս խնդրանքը կասարել, չեմ էլ ցանկանում, որ մեկ ուրիշն էլ դա անի: Սովորությունն չունեն անստորագիր գրություններին ոչ արձագանքելու, ոչ էլ դրանք հյուրընկալելու մեր թերթում: Հիշալ գրության հեղինակը կամ հեղինակները ոչ միայն չեն ստորագրել, այլեւ հասուկ ջանք են գործադրել թափանցելու կամ ֆողարկելու իրենց ինֆունությունը: Ինչպե՞ս, ինչպե՞ս են վախենում, ումից են ամաչում: Ժամանակին թուրքախոս հայերն մասն դարձաներում կասեին՝ «**իզե մեյդան, իիե շեյթան**», որ թարգմանի՝ «ահա՛ հրատարակը, ահա՛ սասանան»:

Դուրս ելե՛ք սվերից, ցույց սվե՛ք ձեր դեմքը:

Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԱՍ ՍԱՏԱՐՅԱԼ

Քաղաքական վերլուծաբան,  
Եվրասիական փորձագիտական  
ակումբի համակարգող

**Սեպտեմբերի 8-ին «Մարիո»  
հյուրանոցում տեղի ունեցավ հայ-  
ռուսական առաջին մեդիա-ֆոր-  
ումը, որին մասնակցելու հնար-  
ավորություն ընձեռնվեց նաև  
ինձ: Երկրորդ օրը նաև նույն  
համայնքում իմ էլոյթից հետո մի ֆանի  
գործընկերներ խորհուրդ սվեցին  
տղազրել դրա հիմնական  
դրույթները, որոնցից հնարավոր  
լինի մի մասնագիտական ֆննար-  
կում ու բանավեճ ծավալելու:  
Ստորև ձեր ուշադրությանն են  
նարկայացնում իմ մտեցումներն  
ու դիրքորոշումները, հույս ունե-  
ցնալով, որ դրանք իսկապես շա-  
հազգիք եւ որակյալ ֆննարկման  
հիմք կդառնան:**

**Նոր աշխարհափոխական  
իրողություններ  
Հարավային Կովկասում**

Առաջին հանգամանք, որ հարկ են  
համարում նշել, Թուրքիայի աննախա-  
դեղ առաջխաղացումն է Հարավային  
Կովկասում: Ոչ 1649թ. հետո, երբ սահ-  
ման գծվեց Օսմանյան կայսրության  
եւ Սեֆյան Պարսկաստանի միջև, որ  
1829թ. հետո, երբ սահման գծվեց Օս-  
մանյան կայսրության եւ Ռուսական  
կայսրության միջև, եւ ոչ էլ 1921թ. հե-  
տո, երբ սահման գծվեց Թուրքիայի  
Հանրապետության եւ նախկին ԽՍՀՄ  
միջև, Թուրքիան հնարավորություն չի  
ուներ ել ընդլայնվելու դեպի Հարա-  
վային Կովկաս, չնայած այդ ընդ-  
լայնումը միտ էլ ամրացած է եղել  
դանթուրանական գաղափարակիրնե-  
րի գլուխներում:

1991թ. հետո Թուրքիան բարելավել է  
իր հարաբերությունները թե՛ Ադրբեյջա-  
նի եւ թե՛ Վրաստանի հետ, եւ շատ կա-  
րելի են սնտեսական ու ֆաղափական դե-  
րակասարություն է ստացել երկու երկր-  
ներում էլ: Եվրամիության անդամ  
դառնալու հարցում մեծում ստանա-  
լով՝ Թուրքիան ամրապնդել է հավաքա-  
կան Արեւմուտքի բարեփոխում համա-  
ձայնությունը դեպի Արեւելք սարածվե-  
լու հարցում: Պետք է հասկանալ, որ ես-  
խորհրդային իրողություններում Հարա-  
վային Կովկասի եւ Կենտրոնական Ա-  
սիայի թյուրփախուց երկրները աննա-  
խաղեղ հնարավորություն են ստացել  
խաղաղ դադաններում, առանց դա-  
ժարակցների, առանց միջազգային ի-  
րավունքի նորմերի խախտումների ան-  
հարմարություն եւ խորացնելու միջանց  
միջով համագործակցությունը, նույն-  
պես Սեֆ Թուրանի դարավոր ժառան-  
գական կենսագործմանը: Թուրքիայի  
այս նոր դերը հասկանալի են Ռուսաս-  
տանում, որտեղ Ռուսահիմնական ձգնա-  
ժամը ստիպում է հարավային եւ ա-  
րեւելյան հարեւանների հետ զգույշ,  
նուրբ եւ ձկուն ֆաղափականություն  
վարել: Ռուսաստանը ձգտում է ամեն  
կերպ սերս հարաբերություններ հաս-  
տատել Թուրքիա-Ադրբեյջանի սանդեմի  
հետ եւ այդպիսով ներդաշնակեցնել իր  
դերն ու շահերը Հարավային Կովկա-  
սում:

Այս նոր իրավիճակն է, որը երեւի ստի-  
պել է մեր ֆաղափական գործիչներին  
հրապարակային հայտարարություններ  
անել Ռուսաստանի Հարավային Կով-  
կասից հեռանալու մասին: Ինչպես  
հայտարարում են իրենք՝ ռուսական  
դաշնակցական աղբյուրները, այդ գնա-  
հասականը ճիշտ չէ, որովհետեւ Ռու-  
սաստանը Հարավային Կովկասից ոչ  
մի տեղ հեռանալու մտադրություն չու-  
նի: Ռուսական ռազմավարությունը

# Վերլուծական հանրության դերը Հարավային Կովկասում նոր ֆաղափական իրողությունների ձգարիս գնահատման գործում



մեր սարածաբանում հանգում է  
նրան, որ ամրապնդի դիրքերը, որտեղ  
դրանք ունի եւ օգտագործի իր ազդեցու-  
թյունը խաղաղ ու կանխատեսելի  
մթնոլորտ ստեղծելու համար, որտեղ ին-  
քը կկարողանա դադարեցնել իր ազդե-  
ցությունը:

Ավելի ֆան մեկ դար առաջ Օսմա-  
նյան կայսրության առաջնորդները բա-  
ցիեբաց սղառնում էին արեւմտահայ  
ֆաղափական գործիչներին, թե հայերը  
կանգնել են իրենց ճանադարհին դե-  
պի Թուրան եւ խանգարում են իրենց:  
Առաջին համաշխարհային դաշտազ-  
մի ընթացքում այդ սղառնալիքը կեն-  
սագործվեց իբրեւ Հայոց ցեղասղա-  
նություն, եւ Արեւմտյան Հայաստանը  
ամբողջովին հայաթափվեց:

Հիմա, թուրքական եւ ադրբեյջանա-  
կան ցանկության դադարադադար ան-  
բողջովին ինտեգրվելու, Արեւելյան Հա-  
յաստանը՝ Հայաստանի Հանրապետու-  
թյունը, նորից հայտնվել է այդ աղբյուրի  
մեջ: Նախկին կլիպները, որոնցով ա-  
ռաջնորդվել են հայերը Անտանտի,  
խորհրդային Միության եւ եսխորհ-  
րային առաջին սարիների դադաններ-  
ում, այս դադարադադար անօգտագոր-  
ծելի են եւ նույնիսկ վստանգավոր: Հա-  
յաստանը դադար է ձկունություն եւ ի-  
մասնություն ունենա իր գոյությունը,  
սարածային անբողջականությունը եւ  
նույնիսկ զարգանալու հնարավորու-  
թյունը դադարեցնելու համար, ոտի  
սակ չընկնելով:

Իրանը մեր բարեկամն է եւ բնական  
դաշնակիցը: Եթե Ռուսաստանը չի ու-  
զում փչացնել հարաբերությունները  
թուրք-ադրբեյջանական սանդեմի հետ,  
Իրանը առավել եւս դա բացահայտ ա-  
նել չի կարող: Իրանին Ռուսաստանի ու  
Թուրքիայի հետ միավորում է մի բան.  
Հարավային Կովկասի սարածաբանա-  
յին խնդիրները լուծել սարածաբ-  
անի ներում, առանց հավաքական  
Արեւմուտքի եւ աշխարհի մյուս ու-  
ժային բեւեռներին ներգավելու: Սրա  
համար է ստեղծվել «3+3» ձեւաչափը,  
եւ չնայած Վրաստանը առայժմ դրան  
մասնակցել չի ուզում, այն, փաստ-  
րեն, որոնք խորհրդակցական հարթակ  
արդեն գործում է:

Եվ վերջապես՝ ԱՄՆ եւ Եվրոպա-  
կան Միության դերը մեր սարածաբ-  
անում: Ադրբեյջանական նավթը եւ  
վրացական հաղորդակցական ենթա-  
կառուցվածքները դաշնադադար են դարձել,  
որ Հարավային Կովկասը էական շա-  
հերի ու հեռափոխության գոտի դառնա  
ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի համար: Այդ շահերը

դաշնակցություն համար նրանք Հայաս-  
տանում, Վրաստանում եւ Ադրբեյջանում  
էական ծախսեր են անում եւ անընդ-  
հաս մեծացնում հեռափոխ խնդիրնե-  
րի շրջանակը, ավելի ու ավելի համառ  
առաջ մղելով դրանք: Ուկրահիմնական  
ձգնաժամի ծավալման այս օրերին  
նրանց գլխավոր խնդիրը Ռուսաստ-  
անին Հարավային Կովկասից դուրս  
մղելն է: Եթե դա հաջողվի, աղա Հա-  
յաստանի համար անկանխատեսելի  
հեռանալներ կարող են առաջանալ:  
Դրա համար էլ հարկ է ուսումնասիրել  
եւ փորձել ձգարիս գնահատել այն  
սցենարները, որոնք կարող են կենսա-  
գործվել մեր սարածաբանում թափ  
հավաքող իրերիդային դաշտազմների  
հեռանալով:

**Ի՞նչ կարող են անել  
վերլուծաբանները հոգու  
սարածաբանային  
խաղաղության եւ  
կայունության**

Ստորև ցանկանում են ուրվագծել  
հարցադրումների այն շրջանակը, որն  
իր կենսականորեն անհրաժեշտ դա-  
ժարակցություններն է սղառնում: Մեր վեր-  
լուծաբանների հանրությունը 44-օրյա  
դաշտազմից հետո կարող էր իրեն նե-  
ղություն սալ եւ ֆաղափական վերնա-  
խավերի ու հասարակական ակտիվ  
շրջանակների ավելի դաշտազմ եւ  
առարկայորեն հիմնավորված դիրքոր-  
ոշումների համար մյուս ստեղծել:

**Առաջին.** Ի՞նչ կարծենա Թուրքիայի  
եւ Հայաստանի միջև հարաբերու-  
թյունների կարգավորումը Հայաստ-  
անի դադարադադար: Հայտնի է, որ խիստ  
մոտավոր հաշվումներով հայ-թուրքա-  
կան առեւտուրը 2022թ. կազմել է  
400 մլն. դոլար: Թուրքական ներկու-  
մը Հայաստան արդյոք կարող է էլ ա-  
վելի մեծանալ եւ մինչ ո՞ր: Թուրքիա-  
Ռուսաստան ցամաքային առեւտրի  
դադաններում մեր ճանադարիները  
ի՞նչ ծավալի բեռներ են ընդունելու:  
Կարող է արդյոք Հայաստանը դառ-  
նալ էական միջանցք թուրք-ռուսա-  
կան ցամաքային առեւտրի համար:  
Թուրքիան ունի՞ արդյոք հնարավորու-  
թյուն եւ հեռափոխություն Հայաստ-  
անում սնտեսական էֆաղանսիա իրա-  
կանացնելու համար: Կարող է արդ-  
յոք ԵԱՏՄ շրջանակներում Հայաս-  
տանի մասնակցության հեռազա ա-  
խուժացումը չեզոքացնել այդ էֆ-  
աղանսիայի թափը:

**Երկրորդ.** Եթե գործարկվեն Հայաս-  
տանը Ադրբեյջանին կաղող բոլոր ձա-

նադարիները եւ աննախաղեղ հնա-  
րավորություն ստեղծվի Հյուսիս-Հա-  
րավ ռազմավարական առանցք ուժե-  
ղացնելու համար, կարող է արդյոք մե-  
ծանալ Իրանի դերը Հայաստանում եւ  
Վրաստանում (ուճի՞ արդյոք այդ ներու-  
ժը Իրանը արեւմտյան արգելամիջոց-  
ների դադաններում): Ի՞նչն է խանգա-  
րում (բացի հայտնի արգելամիջոցնե-  
րից) Հայաստանին եւ Իրանին ուղա-  
դա մեծացնել սնտեսական համա-  
գործակցության ծավալները: Եթե Ի-  
րանը ԵԱՏՄ-ի հետ ազա առեւտրա-  
կան գոտու մասին երկարամյա համա-  
ձայնագիր ստորագրի, ի՞նչ նոր բոնուս-  
ներ կստանա Հայաստանը: Կարող է  
արդյոք մեր երկիրը Ադրբեյջանից կտրել  
եւ մեզանով անել այդ բեռնափոխադ-  
րումների ինչ-որ մասը:

**Երրորդ.** շատ կարելի է հասկանալ,  
թե սնտեսական առումով ի՞նչ է իրենից  
ներկայացնում Սեֆ Թուրանի զար-  
գացման ծրագիրը: Ի՞նչ բեռների փո-  
խադրության եւ մարդկային հոսքերի  
ստեղծարժի մասին է խոսքը: Ունի՞  
արդյոք Հայաստանը ներուժ դիմակայե-  
լու թուրք-ադրբեյջանական լայնածա-  
վալ ինտեգրման բնական հեռանալնե-  
րը: Ի՞նչ կարող են անել Հայաստանը եւ  
Վրաստանը միասին սեփական սնտե-  
սական ինֆրիստրուկտուրային մոր  
դադաններում դաշնակցություն հա-  
մար: Կա՞ արդյոք այնպիսի ներուժ հայ-  
ռուսական փոխադադար առեւտ-  
րասնտեսական համագործակցության  
մեջ, որը կարողանա էական գործոն  
դառնալ ամբողջ Հարավային Կովկա-  
սում սնտեսաֆաղափական հավասա-  
րակշռությունները հաստատելու եւ ան-  
հարմարություն համար:

Եվ չորրորդ. ի՞նչ ֆաղափականություն  
դադար է վարի Հայաստանը, որոնցից իր  
անվստանգությունը եւ կայունությունը  
անհարմարություն համար հավասարակե-  
ռի հարաբերությունները Ռուսաստանի,  
Եվրոպական միության, ԱՄՆ-ի, ոչ հե-  
ռու աղադադար նաև Չինաստանի  
հետ: Համաձայն է արդյոք վերլուծա-  
կան հանրությունը այն մտքի հետ, որ  
վերջին 25 սարիների ընթացքում վա-  
րած բազմավեկտոր եւ կոմպլիքսնեար  
ֆաղափականությունը ամբողջովին  
ձախողված է եղել, թեկուզ այն դադար  
դաշտազմով, որ մեր կենսական հարցե-  
րում մենք աշխարհում ոչ բարեկամ ու-  
նենք, ոչ էլ կայուն գործընկեր: Ինչպի-  
սին դադար է լինի Հայաստանի արտաքին  
ֆաղափականությունը, եթե մենք չենք  
ուզում կորցնել ինձ ռազմավարական  
դաշնակցին եւ միաժամանակ հաս-  
կանում ենք, որ դադար է խորը եւ վստա-  
հելի հարաբերություններ ձեւավորել  
Հարավային Կովկասում ակտիվ դեռա-  
կասարություն ունեցող բոլոր ուժերի  
հետ:

**Ինչո՞վ կարող են  
վերլուծաբանները օգտակար  
լինել ֆաղափականություն  
կերտողներին**

Հայաստանը շատ հարցերում ուղա-  
կի ստիպված է կենսագործել արտաքին  
ուժերի երաշխավորությունները: Ա-  
շխարհի երկրների մեծ մասը այդ շեփո-  
նեղով է կազմակերպում իր աշխա-  
տանքը: Երեւի սա նորմալ է: Վերջին սա-  
րիներին համարյա բոլոր ոլորտներում  
զգացվում է արեւմտյան խորհուրդների  
եւ խորհրդակցության ազդե-  
ցությունը: ➔6

ՀԱԿՈՒ ՉԱԵՐՅԱԼ

Թուրքիա

# Փաշինյան-Էրդողան հեռախոսազրույցը թուրքական լրատվամիջոցների մեկնաբանությանը

Դրա նախօրեին Թուրքիայի նախագահը գրուցել է Իլհամ Ալիևի հետ

Սեպտեմբերի 11-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց էր ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ, վերջինի նախաձեռնությամբ: Դա լայն արձագանք էր գտել հայկական, թուրքական եւ միջազգային, այդ թվում նաեւ BBC-ի, Reuters-ի, Euronews-ի, գերմանական DW-ի նման լրատվամիջոցներում: Պարզապես դրա բովանդակության մասին տեղեկություններն են կցկտու, ինչպես սովորաբար լինում է լրատվության դեկլարացիաների համանման մյուս հեռախոսազրույցների դարձառկային: Պարզապես ասեմք, որ վերոհիշյալ հեռախոսազրույցի նախորդ օրը Թուրքիայի նախագահը հեռաձայնել էր **Իլհամ Ալիևին** Նյու Դելիից, որտեղ նա մասնակցել է G-20-ի «Մեծ հասնակ» գագաթաժողովին: Ըստ թուրքական լրատվամիջոցների, Էրդողանն Ալիևի հետ մտեր է փոխանակել սարածառջանում ընթացող բազմակողմ զարգացումների շուրջը, միաժամանակ ֆինանսել է Լեռնային Ղարաբաղում ծավալվող վերջին իրադարձությունները:



Ի դեպ՝ «Arka.am»-ի հավաստմամբ, Էրդողանը նախօրեին սխալ էր համարել Հայաստանի գործողությունները Լեռնային Ղարաբաղում, դայմանավորելով ՀՀ վարչապետի հետ իր հեռախոսազրույցը հենց դրանով, ինչը հաստատում են նաեւ թուրքական լրատվամիջոցները, մասնավորապես tgrthaber.com կայքէջը, որը երկու երկրների դեկլարացիաների հեռախոսազրույցը ընթերցողին մատուցում է «Ղարաբաղյան ուղերձ Հայաստանին. Էրդողանը գրուցեց Փաշինյանի հետ» խորագրով, ավելացնելով միաժամանակ, որ Թուրքիան դասադարձել է «Ադրբեջանի սարած Լեռնային Ղարաբաղում անցկացված նախագահական ադրիմի ընթացումները, որտեղ Հայաստանը բարունակում է իր սարիչ գործողությունները»: Թուրքիայի արտգործնախարարությունը, դասադարձելուց զատ, Արցախի նախագահական ընթացումները հաղորդագրությամբ որակել է որդես հաճության բանակցությունների վիճեցման կանխամտածված փայլ:

ՀՀ վարչապետին հեռաձայնելու Էրդողանի նկրտումները թեկուզ մասնակի բացահայտելու առումով հետաքրքրական է haberler.com -ի «Ղարաբաղյան ճգնաժամը հաղթահարելու համար Էրդողանը նախաձեռնություն է հանդես բերում. նա Ալիևից հետո հեռախոսակաղ հաստատեց նաեւ Փաշինյանի հետ» խորագիրը կրող հրատարակումը, որտեղ բարադրվում են Ադրբեջան-Հայաստան լարվածության հարաձուռն սրումը կատեցնելու եւ ճգնաժամի գոտում մթնոլորտը խաղաղեցնելու Էրդողանի ամս մարդասիրական ջանքերը:

Վերջինին դասադարձում է բացի Ուկրաինայից, Ռուսաստանի դեմ նաեւ Հարավային Կովկասում երկրորդ ճակատը բացելու Վաշինգտոնի ձեռնարկումները, որդես սարադամ է բնութագրում Հայաստան-Ադրբեջան հաճեցման գործընթացին միջամտելու վերջինի ձեռնարկումները, խստագույնս ֆննդադատում է Փաշինյանին Հայաստանի անվանագրության հարցում հույսը Ռուսաստանի վրա դնելու, իսկ ՆԱՏՕ-ի ընդարձակման եվրոդական կոմիտեի նախագահ Գունթեր Ֆեիլինգերի (Gunther Fehlinger) էլ «Հայաստանին ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկելու» Վաշինգտոնի վարչակարգին արած կոչի համար: Աղա գոհունակությամբ արձանագրում է Մոսկվայի մոտան Հայաստանին, թե Կրեմլը այս ամենից հետո չէր կարող «ձեռքերը ծալած նստել»:

Գալով ՀՀ վարչապետի հետ Էրդողանի հեռախոսազրույցին, աղա Թուրքիայի դեկլարացիան մայրաքաղաքում, դեռեւս սեպտեմբերի 10-ին լրագրողների հետ հանդիմուման էր նեւ Փաշինյանի հետ հեռախոսակաղ հաստատելու իր մարդության մասին: ՀՀ կառավարության մամուլի ծառայության վկայությամբ, գրուցակիցներն անդրադարձել են Հայաստան-Թուրքիա հարաբերություններին եւ սարածառջանային խնդիրներին եւ ընդգծել, որ սարածառջանում երկարատեւ խաղաղության եւ կայունության ձեռքբերումը կնդասի սարածառջանի բոլոր երկրների զարգացմանն ու բարգավաճմանը: Դա Թուրքիայի սեսանկյունից ենթադրում է Հայաստան-Ադրբեջան հաճության դայմանագրի բուսափույթ ստորագրումն ու Չանգեզուրի միջամցի հնարավորիս բուսացումը:

Վերջում թուրքական թերթի հոդվածագիր Գյուլլերը եզրակացում է. «Ղարաբաղում առաջացած ճգնաժամը դեռ բարունակվում է: Դրա հաղթահարման համար անհրաճեո է իրականացնել ստրեւ բարադրված հետեւյալ երեք փայլը.

1. ԱՄՆ-ի սարադմները Հարավային Կովկասում չեն դարադի: Հետեւաբար հիմնահարցին վերջնական լուծում սալու համար դեճ է կյանքի կոչել 3+3 ձեւաչափը, որի մեջ ընդգրկված են «Թուրքիան, Ռուսաստանը, Իրանը, Ադրբեջանը, Հայաստանը եւ Վրաստանը»,
2. Ռուս-թուրքական համագործակցությունը, ինչդես 20-րդ, այնդես էլ 21-րդ դարում, անգլոսափոսնյան մախագծերը չեզոքացնելու արդյունավեո գլխավոր միջոցն է,
3. Թուրքիան Իրանի հետ համատեղ ուճերով, փոխըմբռնման հենքի վրա դարսավոր է ծավալել գաղափարախոսական լուրջ դայմար:

ՀԱԿՈՒ ՉԱԵՐՅԱԼ

Վերջին օրերին աննախադեղ սրվել է Երեւան-Մոսկվա լարվածությունը: Պասձառը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ինֆուլիսան դեոսության դեկլարաիին վայել ֆաղափական փայլերն են, դայմանավորված Հայաստանին եւ հայ ժողովրդին նսեմացնելու բուս հավերճ դաճնակից Ռուսաստանի հարսեւ չարանեգուբյամբ: Ինչդես երեւում է ՀՀ վարչապետի հայսարություններն անակնկալի են բերել Կրեմլի իմաստում դեկլարաիին, որոնք վերջադես գիսակցել են, որ Հայաստանը Հարավային Կովկասում Ռուսաստանի միակ հեմարանն է: Այս իսկ դասձառով նրանք հոխոսալիս, չեն մոռանում նաեւ մեղա գալ, նույնիսկ Հայաստանի բահերը դաճոդանելու մասին են խոսում: Բայց գնացրը սեղից արդեն բարձրել է:

Դա գգում են նաեւ միջազգային լրատվամիջոցները, որ վերջին օրերին հաձախ են արծարծում Երեւան-Մոսկվա լարվածության հարցը: Ինչ վերաբերում է թուրքական մամուլին, աղա «Միլլիյեթը», որան էլ թուրքական մյուս թերթերի համեմատ գուսղ լինի, ի վերջո

## «Երբ Ռուսաստանը դարադեց աջակցել, Փաշինյանը երես թեճեց նրանից. դա հանգեցրեց ԱՄՆ-ի հետ իրականացվող գորավարժության բնույթի փոփոխությանը», գրում է թուրքական «Միլլիյեթը», անդրադարձնալով Փաշինյանի հարցազրույցի ֆոնին Երեւան-Մոսկվա լարվածությանը



արսահայտում է թուրքական դեոսության սեսակեթը: Սակայն խնդիրը այդ սեսակեթի մեկնաբանությունը չէ, այլ դա «Միլլիյեթի» միջոցով հայ ընթերցողին նույնությամբ, թարգմանաբար ներկայացնելը: Ահա թե ինչ է գրել թուրքական թերթը. «Ամերիկյան «Politico» հանդեսին սված հակիրճ հարցազրույցում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ռուսաստանի (որի հետ լարված հարաբերությունների մեջ է) եւ Լեռնային Ղարաբաղի առնչու-

## Երեւան-Մոսկվա լարվածություն

թյամբ կարեւոր հայսարություններ արեց: Նա այդ հարցազրույցը սվել էր սեպտեմբերի 3-ին, որտեղ խոսուովանեց, որ 44-օրյա դաճերազմում վսահելով Ռուսաստանին, ռազմավարական սխալ են գործել: Նրա կարծիով «ներկա դահին Ուկրաինայում գեմի եւ գիմամթերի խիստ կարիքն ունեցող Ռուսաստանը ի վիճակի չէ արաիովել Հայաստանի անվանագրությունը:

**Հայաստանը ձանաչեց Ադրբեջանի անկախությունը**  
Փաշինյանն այս հայսարությունից հետո հայտնեց, որ ԱՄՆ-Հայաստան համատեղ գորավարժություն է կազմակերդելու: Խնդրո առարկա գորավարժությունն արդեն սկսել է, կսելի 9 օր:  
Այս հանգամանքն աննախադեղ սրեց Մոսկվա-Երեւան լարվածությունը: Ահա թե ինչու ռուս առաջնորդ **Պուսինը** երեկ, կարծես դասափանելով Հայաստանի վարչապետին, ասաց.

«Փաշինյանը ինձ ծավալում մի մամակ է ուղարկել: Իր հետ եփվում են: Հայաստանի կամ Փաշինյանի հետ որեւէ խնդիր չուներ: Չեն կարծում, որ «ուղեծրի որեւէ փոփոխություն» (Հայաստան-ԱՄՆ մերձեցման դես) լինի: Ամեն ինչ սեսում եւ հասկանում են: Խնդիրն այն է, որ Հայաստանը Պրահայում ստորագրված փաստաթղթով, իրականում ձանաչել է Ադրբեջանի գերիխանությունը Ղարաբաղի վրա»:

**Փոխվել են Ռուսաստանի առաջնահերթությունները**  
Փաշինյանն իր հերթին օրվա մեջ ամերիկյան Politico հանդեսի հարցերին դասափանեղիս հիոեցրեց, որ Ադրբեջանի հետ բախումների հավանակայնության ներկա փուլում չի կարող Ռուսաստանին կրկին վսահել: Աղա նա ավելացրեց. «Ռուսաստանն ոււադրությունը կեմսրոնացրել է Ուկրաինայի վրա, իսկ դա հանգեցրեց Ռուսաստանի առաջնահերթու-

թյունների փոփոխությանը: Հետեւաբար մեմ դեճ է որդեգրեմք այլ երկրներից մեր կախվածությունը նվազագույնի իջեցնելու ռազմավարություն»:

### Կարգավորելու են հարաբերությունները մեր հարեանների հետ

Հարցազրույցի վերջում Փաշինյանն ասաց, որ սասնամյակներ սեւող բախումներից հետո խաղաղությունը հաստատելու համար ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Ռուսաստանի միջնորդությամբ բարունակում ենք բանակցությունները Ադրբեջանի հետ եւ հավելեց. «Եթե ստեղծելու ենք մնայուն, հավերժական դեոսություն, աղա դեճ է հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման լուրջ փայլեր կասարեմք: Թեեւ մեր գործընկերները՝ Եվրոդական միությունն ու ԱՄՆ-ը ժողովրդավարական բարեփոխումների հարցում աջակցում են մեզ, սակայն այդ աջակցությունը դեռեւս անբավարար է»:

ՆԻԿՈՒԱՍ ԶՐԻՍՏՈՑ

# Կարծես մեկ այլ էթնիկական զսում է իրականացվում, իսկ մենք ուժադրություն չենք դարձնում

## Տեղիսակի usnrta թարգմանաբար ներկայացվող հոդվածը սպազրվել է «Նյու Յորք Թայմսի» սեպտ.ի 2-ի համարում

Ուկրաինայում շարունակվող դաժնորեն իր ռուսական սանջամֆի կենսորոններով եւ ֆաղաֆաղների կոտորածներով, ինքնին բավական սարսափելի է, բայց մեկ այլ երկիր, օգտվելով դեռևս սուրբությունների մտադրվածությունից, մարդկության դեմ ուղղված իր անձնական ուժերն է իրականացնում:

Ծանոթացե՛ք Ադրբեջանի հետ: Հավանաբար չե՛ք լսել Լեռնային Ղարաբաղ անվամբ հայկական անկլավի դեմ ուղղված Ադրբեջանի վայրագությունների մասին, բայց դրանք արժանի են մանրագին ֆննարկման: Միջազգային ֆրեական դասարանի նախկին դասախազ **Լուիս Սորենո Օկամոն**, որի հետ սարհներ առաջ ծանոթացել եմ, երբ դաշտում էր դասախառնակության ենթարկել մեղավորներին Սուդանի Դարֆուր շրջանում կատարված ցեղասպանության համար, այժմ նույն բնութագրմամբ է ներկայացնում այն, ինչ կատարվում է Լեռնային Ղարաբաղում: «Շարունակական ցեղասպանություն է իրականացվում Լեռնային Ղարաբաղում ամբողջ 120 հազար հայերի դեմ», գրել էր նա իր զեկուցման մեջ:

Մենք հակված ենք մտածելու, որ ցեղասպանությունը մի որոշակի էթնիկական խմբավորման ոչնչացումն է: Մինչդեռ 1948-ի «Ցեղասպանության կոնվենցիայի» իրավական սահմանումը ավելի լայն է եւ չի սահմանափակվում սոսկ զանվածային սպանություն իրականացնելու դաշտում: Եթե կան որոշակի «գործողություններով դաժնամարտի դեմ» իրավիճակ, որը միջակ է ոչնչացնելու» էթնիկական, ռասայական կամ կրոնական մի որոշակի խմբի անդամներին: Ըստ Սորենո Էկամոնի, դա էլ հենց այն է, ինչ կատարվում է Ադրբեջանը՝ շրջափակելով Լեռնային Ղարաբաղը, որդեգրել մարդիկ այնտեղ մահանան, կամ այնտեղից հեռանան՝ սարսափածներով մի ամբողջ հինավուրց համայնք:

«Սովի մասնելը ցեղասպանական անցեանելի գեմ է: Առանց անմիջական գործուն փոփոխության, հայերի այդ խմբաբաժնակը մի ֆանի շարժված ընթացքում բնաջնջվելու է», գրել էր Օկամոն: Իսկ ինձ ասաց, որ «չափազանց կարեւոր է այդ գործողությունները ցեղասպանություն ունենալը»: Ես կավելացնեի, որ վաղապես նշանակություն ունի նաեւ այն, որ Մ. Նահանգները եւ մյուս գերտերությունները, ներառյալ Բրիտանիան, որ ցարդ շատ դաժնի է եղել, ճնշում գործադրել Ադրբեջանի վրա:

Ցեղասպանություն հասկացությունը առաջացավ հայերի դեմ 1915-16 թվերին Օսմանյան կայսրության գործադրած զանգվածային սպանությունների հետեւանում, իսկ հայերին



այսօր սովանահության ենթարկելը նշանակում է, որ դասությունը ամբողջությամբ կրկնվելու վտանգի առաջ է կանգնած:

«Ցեղասպանության զգոնություն» (GW) կազմակերպությունը «Ցեղասպանության արտակարգ վիճակ» է հայտարարել, «Ցեղասպանության կանխարգելման Լեմկին ինստիտուտը» (LIGP) «Ցեղասպանության աշխարհը սահմանափակող ազդեցության է հնչեցրել, իսկ «Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան» (IAGS) զգուցացրել է «Ցեղասպանության վտանգի առկայության մասին» եւ կոչ է արել Ադրբեջանին մեղավոր ճանաչել մարդկության դեմ գործած հանցագործությունների համար:

Ներկա ճգնաժամը սկիզբ առավ անցյալ սարվա վերջին, երբ ադրբեջանցիները ագրեսիվացան Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող Լաչինի միջանցքը, որը միակ ճանապարհն է սնունդ եւ դեղորայք հասցնելու այդ սարածի բնակչությանը: Արդարադատության միջազգային դասարանը կոչ արեց վերացնել արգելափակումը, իսկ Ադրբեջանի կառավարությունը դրան հակառակ՝ ճանապարհին դադարեցրեց եւ արգելեց անգամ ԿԽՄԿ-ի հունամիտար օգնության մեքենաների անցումը այդտեղից:

«Հացի հերթ կանգնած մարդիկ ուժազանց են լինում», հայտնում է BBC-ին, մեքենաներով դարաբաղի մի լրագրողի խոսքերը: Հաղորդագրությունը նաեւ հավելում է, որ շատ չհետադարձ «Halo Trust» կազմակերպությունը, որ ակամազերծման աշխատանքներ է իրականացնում սարածում, սիրոված է եղել դադարեցնել գործողությունները,

«որովհետեւ աշխատակազմի անդամները հյուծված են եւ չեն կարող աշխատել ամբողջ գիտերը հացի հերթ կանգնելուց եւ դասարկածն են սուն վերադառնալուց հետո»:

«Լեռնային Ղարաբաղի իշխանությունների սկզբներով՝ մահվան դեմքերի մեկ երրորդը թերսնուցման հետեւան է», հայտարարել է BBC-ն: Ես հնարավորություն չունեմ ձեռնելու այս սկզբը, բայց ամեն ինչ ցույց է տալիս, որ իրավիճակը չափազանց ծանր է եւ օրեցօր ավելի է վատթարանում:

Խոստովանեմ, վախենում եմ, որ Արեւմուտքն էլ է հոգնել եւ ներքին գործերով է զբաղված: Ուկրաինայից բացի, Արեւմուտքը միեւնույն ձեռով է արձագանքել եւ փչ ուժարություն է դարձրել գլոբալ մյուս ճգնաժամներին, սկսած Եթովպիայի զարհուրելի գազանություններից եւ վերջացած Սուդանի ռազմամուլ իշխանությունների կողմից ֆաղաֆաղների սպանությունները: Դժբախտաբար, բռնակալ ղեկավարների համար, կարծես, ճիշտ ժամանակն է իրականացնելու ռազմական հանցագործություններ:

Բռնասիրական Ադրբեջանի ժողովուրդը հիմնականում մահմեդական է եւ թյուրքերենի մի շարքերակով է հարողակցվում, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ֆրիսոնյա է եւ հայերեն է խոսում: Երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, Լեռնային Ղարաբաղը ձգեց անկախություն ձեռք բերել: Տեղի ունեցավ դաժնորեն, որ ավարսվեց նրանով, որ անկլավը գործում էր ինքնավար կարգավիճակով, բայց հարեւան Հայաստանի հետ սերտրեն կապված: 2020-ին Ադրբեջանը կարճաժամկետ մի նոր դաժնորեն սանձազերծելով գրավեց անկլավի

մեծ մասը եւ այժմ փորձում է սիրանալ նաեւ մնացյալ մասին, դուրս փելով, իմ համոզմամբ, էթնիկ հայ բնակչության մեծամասնությանը:

Աշխարհը, ներառյալ Հայաստանի վարչապետը, Լեռնային Ղարաբաղը համարում է Ադրբեջանի մաս: Ադրբեջանը իրավունք է վերադրում իրեն Լեռնային Ղարաբաղը ֆաղաֆաղանադես եւ սնեստադես «ինտեգրելու» մայր դեսությանը:

Սակայն այն, ինչ տեղի է ունենում, բոլորովին էլ «ինտեգրում» չէ, այլ սովանահության իրականացում: Միակ կեսը, որի շուրջ երկու հակառակորդ դեսությունները (Մ. Նահանգներն ու Ռուսաստանի Դաշնությունը) համակարծիք են, այն է, որ Ադրբեջանը դարաավոր է վերաբացել Լաչինի միջանցքը եւ վերջ դնել առադամին:

Հայաստանի կիրառական ֆաղաֆաղանության հետազոտական ինստիտուտի աշխատակից **Բենյամին Պողոսյանը** սագնադալից ադեսին վերջ դնելու փոխադիջումային մի շարքերակ է առաջարկում, նշելով, որ Ադրբեջանը կարող է վերացնել Լաչինի արգելափակումը, իսկ Լեռնային Ղարաբաղը կարող է բացել մեկ կամ ավելի ճանադարհներ դեմի Ադրբեջան, ինչը իր կարծիքով Ադրբեջանի սրսովը կլինի:

Արգելափակումը դասադարադ հայտարարության մեջ Մ. Նահանգները հուշում կատարեց այս մասին: Նման փոխադիջումային շարքերակին մաս են կազմելու նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերին ազատություն դարգելելու Ադրբեջանի երաշխիքները:

Սա, մեր կարծիքով, բավարար լուծում չէ անուշտ, ֆանի որ մարդկանց սովի մասնելու համար Ադրբեջանին վարձահասույց լինելու միտում կա կարծես դրանում, բացի այդ, ոչ ոք չի կարող վստահել Ադրբեջանի սկած խոսումներին կամ երաշխադրություններին: Բայց դիվանագետների ժյուր աշխատանքը սխալ, թերի, կամ աշելի համաձայնություններ հորինելն է, որոնք ավելի լավ են թվում, ֆան որեւէ ուրիշ այլընտրանքային ուղիների որոնումը: Տվյալ դարադայում անկատար նման գործարքը նախընտրելի է զանգվածային սովանահությունից եւ մի անգամ եւս հայերի էթնիկական զսումներից:

Անգլ. բնագրից թարգմ.՝ ՏԿՄՈՒԿ ԾՈՒՆԻԿՅԱՆԷ (The Armenian Mirror-Spectator)

⇒ 4 Սա դժգոհություն է առաջացնում Ռուսաստանում եւ Իրանում: Բոլորովին վաճ չէր լինի, որ հասարակության ակտիվ մասը (որը նաեւ ավելի գրագետ ու դասախառնաու մասն է) զինված լինեւ սեփական վերլուծական նյութերով ու ավելի ինֆորույն մոնեցումների երաշխադրություններով: Չէ՞ որ սա ուժեղներին վայել բան է: Թույլերը առաջնորդվում են ուժեղների խորհուրդներով: Ուժեղները փորձում են սեփական մոնեցումներ մշակել եւ դրանք կենսագործել աշխարհում: Պարզ

## Վերլուծական հանրության դերը ...

երեւում է, որ մեր սարածաշրջանի անմախադեղ մոր իրողությունների դայմաններում մենք դեռ չենք հասկացել դրանց հարմարվելու եւ մոր մոնեցումներ մշակելու դասվիրանները: Լեռնային Ղարաբաղի գերբարդ խնդիրը լուծելու ճանադարհին մենք կանգնած ենք հետեյալ հրամայականի առջեւ: Վերադառնալ 2020թ. նոյեմբերի 9-ի Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան համաձայնագրի կենսագործմանը եւ

հնարավորինս շուտ կնիել խաղաղության դայմանագիրը: Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ինֆորուցման սրբազան իրավունքից բխող նրա կարգավիճակի հարցը դես է չխառնել հայ-ադրբեջանական խաղաղության դայմանագրի սրբագրման հետ եւ թողնել այն մինչեւ որ հետադայում, ավելի նդասավոր դայմաններում, ավելի բանական ու բարյացակամ մոնեցումների արդյունում, ժամանակակից աշխարհի գլխավոր

ուժային կենսրոնների (Ռուսաստան, ԵՄ, ԱՄՆ) կստեղծվի նդասավոր միջավայր այդ կարգավիճակը ձեւավորելու համար: Եթե գիտականորեն, դասաւժ վերլուծության արդյունում ձեւավորվի այն զնահասականը, թե մեզ օդիջի դես ոչ միայն խաղաղություն ու կայունություն է անհրաժեշտ, այլեւ հնարավորություն է ընձեռնվել ինֆիշխանությունը դահողանելու, սնեստությունը զարգացնելու, ընդհանուր միջավայրի անվ-

## ԼՍԵՐՏ ԿԱՂԱՐՇՅԱԼ

ՏԵՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏՅԱՍ, ԿԻՆՈՅԵՐԻՍ

# Վարդենուր ծաղիկներ է նկարում



թյունների, ստեղծագործական բերկրանքի սարիների միջով:

